Ñ»é: 580 523

ՆԱԽԱԳԻԾ 29

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄ

-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2011ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ <<ՏԿՆԾԻԳ-ԱՇՁԲ-ՃՇ-11/03 ՀՎ>> ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲԱՑ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՉԱՓԱԲԱԺԻՆ 1 <<Հ-88, Մ-10-ՀՈՐՍ ՀԱՏՎԱԾ (ԿՄ 0+000-ԿՄ 5+373) ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ>> ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 7-ի <<Հանրապետական գործադիր մարմինների կազմում գործող ծրագրեր իրականացնող պետական հիմնարկի օրինակելի կանոնադրությունը հաստատելու մասին>> N 1369-Ն որոշման 2.1-րդ կետի 5) ենթակետի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

Հաստատել <<ՏԿՆԾԻԳ-ԱՇՁԲ-ՃՇ-11/03 ՀՎ>> ծածկագրով բաց ընթացակարգի գնման գնահատող հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 31-ի և հունիսի 3-ի նիստերով հաստատված <<ՏԿՆԾԻԳ-ԱՇՁԲ-ՃՇ-11/03 ՀՎ>> ծածկագրով բաց ընթացակարգի չափաբաժին 1 <<Հ-88, Մ-10-Հորս հատված (կմ 0+000-կմ 5+373) ավտոճանապարհի հիմնանորոգում>> աշխատանքների գնման արդյունքները՝ ընտրված մասնակից ճանաչելով <<Եղեգնաձորի ՃՇՇ>> ՓԲԸ-ին 421,629,169 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ-ն) պայմանագրային արժեքով:

ՏԵՂԵԿԱՆՔ-Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ

Հայաստանի Հանրապետության կառավարության <<Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեով նախատեսված <<ՏԿՆԾԻԳ-ԱՇՁԲ-ՃՇ-11/03 ՀՎ>> ծածկագրով բաց ընթացակարգի չափաբաժին 1 <<Հ-88, Մ-10-Հորս հատված (կմ 0+000-կմ 5+373) ավտոճանապարհի հիմնանորոգում>> աշխատանքների գնման արդյունքները հաստատելու մասին>> որոշման նախագծի ընդունման

1.1 Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)

Որոշման ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 7-ի <<Հանրապետական գործադիր մարմինների կազմում գործող ծրագրեր իրականացնող պետական հիմնարկի օրինակելի կանոնադրությունը հաստատելու մասին>> N 1369-Ն որոշման 2.1-րդ կետի 5) ենթակետի դրույթով, այն է՝ <<350 մլն դրամին համարժեք և ավելի գումարով մրցույթների դեպքում գնահատող հանձնաժողովը «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված իր գործառույթներն իրականացնելուց հետո մինչև գնման պայմանագրի ստորագրումը մրցույթի արդյունքները ներկայացնում է Հայաստանի Հանրապետության կառավարություն>>, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> N 168–Ն որոշման հավելված 1-ով հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 73-րդ կետի դրույթով, որի համաձայն եթե պետության կարիքների համար կնքվելիք պայմանագրի գինը գերազանցում է գնումների բազային միավորի երեք հարյուր հիսնապատիկը, ապա տվյալ պայմանագիրն ուժի մեջ մտնելու պայման է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից տվյալ գնման ընթացակարգի արդյունքների հաստատումը:

1.2 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Հայաստանի Հանրապետության 2011թ. պետական բյուջեով նախատեսված Հ-88 ավտոճանապարհի Մ-10-Հորս հատվածի (կմ 0+000-կմ 5+373) հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը պատրաստվել են <<Ճաննախագիծ ինստիտուտ>> ՍՊԸ-ի կողմից, իսկ փորձաքննությունը իրականացվել է <<ԷԿՊ>> ՍՊԸ-ի կողմից: Շինարարական աշխատանքների նախահաշվային արժեքը կազմել է 490,930,700 ՀՀ դրամ: Այդ աշխատանքների գնման նպատակով ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության <<Տրանսպորտի ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկի կողմից կազմակերպվել է <<ՏԿՆԾԻԳ-ԱՇՁԲ-ՃՇ-11/03 ՀՎ>> ծածկագրով բաց ընթացակարգ (չափաբաժին 1), որի շրջանակներում ձևավորված գնման գնահատող հանձնաժողովը 2011թ. ապրիլի 14-ին հաստատել է գնման հայտարարությունը և հրավերը: Գնման հայտարարությունը 22.04.2011թ հրապարակվել է ՀՀ ֆինանսների նախարարության պաշտոնական կայքում: Հայտեր էին ներկայացրել երկու կազմակերպություն, որոնց գնային առաջարկները կազմել էին՝ <<Վայքի ՃՇՇ>> ՓԲԸ՝ 459,820,000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ-ն), <<Եղեգնաձորի ՃՇՇ>> ՓԲԸ՝ 421,629,169 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ-ն): Գնման գնահատող հանձնաժողովը 2011 թվականի մայիսի 31-ի հայտերի բացման նիստում հաստատել է նվազագույն գին առաջարկած առաջին տեղը զբաղեցրած հայտատուին՝<<Եղեգնաձորի ՃՇՇ>> ՓԲԸ-ին, իսկ ս.թ. հունիսի 3-ի նիստով՝ գնահատելով առաջին տեղը զբաղեցրած հայտատուի հրավերով սահմանված պահանջներին

համապատասխանելու վերաբերյալ հրավերով պահանջվող փաստաթղթերը, <<ՏԿՆԾԻԳ-ԱՇՁԲ-ՃՇ-11/03 ՀՎ>> ծածկագրով բաց ընթացակարգի չափաբաժին 1 <<Հ-88, Մ-10-Հորս հատվածի (կմ 0+000-կմ 5+373) հիմնանորոգում>> աշխատանքների գնման ընտրված մասնակից է ճանաչել <<Եղեգնաձորի ՃՇՇ>> ՓԲԸ-ին 421,629,169 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ-ն) պայմանագրային արժեքով:

Հիմք ընդունելով "Գնումների մասին" ՀՀ օրենքի 9 հոդվածի 3-րդ մասի պահանջները պայմանագրի կնքման անգործության ժամկետը սահմանվել է տասը օրացուցային օր՝մինչև 2011թ. հունիսի 16-ը:

Առանց վերոհիշյալ գնման արդյունքների՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատման, շինարարական աշխատանքների կապալի պայմանագրերը չեն կարող կնքվել, քանի որ պայմանագրային արժեքը գերազանցում է 350 մլն դրամ ՀՀ դրամը:

1. 3 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Առաջարկվում է հաստատել <<ՏԿՆԾԻԳ-ԱՇՁԲ-ՃՇ-11/03 ՀՎ>> ծածկագրով բաց ընթացակարգի գնման գնահատող հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 31-ի և հունիսի 3-ի նիստերով հաստատված <<ՏԿՆԾԻԳ-ԱՇՁԲ-ՃՇ-11/03 ՀՎ>> ծածկագրով բաց ընթացակարգի չափաբաժին 1 <<Հ-88, Մ-10-Հորս հատված (կմ 0+000-կմ 5+373) ավտոճանապարհի հիմնանորոգում>> աշխատանքների գնման արդյունքները՝ ընտրված մասնակից ճանաչելով <<Եղեգնաձորի ՃՇՇ>> ՓԲԸ-ին 421,629,169 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ-ն) պայմանագրային արժեքով:

1.4 Կարգավորման առարկան

Որոշման նախագծի կարգավորման առարկան է Հայաստանի Հանրապետության 2011թվականի պետական բյուջեով նախատեսված Հ-88, Մ-10-Հորս հատվածի (կմ 0+000-կմ 5+373) ավտոճանապարհի հիմնանորոգման աշխատանքների կապալի պայմանագրի կնքումը:

1.5. Իրավական ակտի կիրարկման դեպքում ակնկալվող արդյունքը

Որոշման կիրարկումը թույլ կտա մինչև 2011թ. դեկտեմբերի 15-ավարտել Հ-88, Մ-10-Հորս հատվածի (կմ 0+000-կմ 5+373) մոտ 5.4 կմ երկարությամբ ավտոճանապարհի հիմնանորոգման աշխատանքները:

Մ.ՎԱՐԴԱՆՅԱՆ